

ՆԱԽԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ն Ա Մ Ա Կ Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա Յ Ի Ց

Բերլին, 1901 թ. մարտի 25-ին.

Ա գ Ր ա Ր Ն Ե Ր Ի պ ա հ ա ն ջ ը մ ա ֆ ս ի վ ե Ր ա ք ե Ր մ ա մ ք:
Արդէն մի քանի տարի է, որ ագրարները (կայուածատները)
սրտնցում են իրանց վիճակից, որովհետեւ Գերմանիայի արդիւնա-
գործութիւնը հսկայական փայտելով է զարգանում, նրա վաճառա-
կանութիւնը ընդհանուրի նախանձն է շարժում, բայց գիւղատն-
տեսութիւնը միշտ կաղում, միշտ կրիայի փայտելով է առաջ շարժ-
ւում: Այստեղ բանուորական օրավարձը հետզհետէ բարձրանում է,
այն ինչ գիւղատնտեսական մթերքների արժէքը արտասանմանն է
մրցման շնորհիւ համապատասխան փոփոխութեան չէ ենթարկ-
ւում:

Ահա դրանից առաջ է գալիս հողատերերի—ագրարների
համար չափազանց անձեռնհաս հետեւանք, այսինքն ռենտը, հողից
ստացուող շահը, պակասում է եւ համեղ պատասխանը նուազում:

Շատ հասկանալի է, որ նրանք աշխատում են այդ չարիքի
առաջն անունը, սակայն իրանց շահասիրական պահանջները միշտ
էլ զանազան բարձր գաղափարներով են համեմուտ, որպէս զի
համակրութիւն գրաւեն եւ կեղծ ֆողի տակից իրանց նպատակն
առաջ տան:

Այսպէս օրինակ, իշխան Բիսմարկը (յայտնի Բիսմարկի ու-
ղիւն) պատգամաւորների ժողովում մտքը բարձրացնելու մասին
խօսելով, ոգեւորուած բացականչում է.

—Եթէ բանուորները մարդիկ են եւ իրաւունք ունեն իրանց
վիճակը բարւոյնելու, մի՞թէ ագրարները նոյն տեսակ մարդիկ չեն
եւ չեն կարող իրանց մարդկային իրաւունքները պաշտպանել.
մի՞թէ արդարութիւնն ու մարդասիրութիւնը միայն բանուորների
համար գոյութիւն ունեն...

Իսկ մամուլի մի մասը կաշուից դուրս է գալիս ագրարնե-
րի պահանջը փաստաբանելու եւ արդարացնելու համար: Էլ ինչե՞ր

ասես, որ չէ գրում այսեղ: Փաստերի աղաւաղում, վիճակագրական տեղեկութիւնների յեղաշրջում, կեղծ ու շինծու լուրեր—այդ բոլորը սովորական երևոյթ են կազմում յիշեալ մամուլի համար:

Այդ համանաբակով վարակուած քերթերից շատերը երբեմն գիտութեան օգնութեանն էլ են դիմում, Մարկս ու Էնգելսին էլ են գերեզմանից վկայ կանչում, որպէս զի ապացուցանեն, թէ ազատ մրցումը վնասակար է, թէ կառավարութիւնը միշտ պարտաւոր է բարձր մակարդակի վաւերացմանը իր արդիւնագործութիւնը, եւ այլն եւ այլն:

Եւ այդ ամբողջ աղմուկը, այդ ամբողջ հարայ-հրոցը նրա համար է, որպէս զի կառավարութիւնը գիւղատնտեսական մրերների մակար բարձրացնէ $3\frac{1}{2}$ -ից մինչեւ $7\frac{1}{2}$ եւ դրանով մի մեծ փառ դնէ արտասահմանեան ներմուծման առաջ:

Ագրարների կարծիքով այդ միջոցն անհրաժեշտ է, որովհետեւ միայն դրանով կարելի է զարգացնել գիւղատնտեսութիւնը, իսկ այդ զարգացումն աւելի քան անհրաժեշտ է, որովհետեւ նա բարեբար ազդեցութիւն կ'ունենայ ամբողջ տնտեսական կեանքի վրայ, կը բարելաւէ գիւղական ժողովրդի վիճակը եւ կ'իրագործէ այն դասակարգի—(իմա՛ ագրարների) արդար պահանջը, որ միշտ էլ միապետական զանի ու հայրենիքի հաւատարմ պաշտպանն է եղել: Բայց բոլորովին այլ երգ է հնչում հակառակ բանակից, բոլորովին այլ փաստեր ու եզրակացութիւններ են հրապարակ հանում սօցիալ-դեմոկրատները:

Եւ իսկապէս. գիւղատնտեսական մրերները Գերմանիա ներմուծում են գլխաւորապէս Ռուսաստանից, որ մի եւ նոյն ժամանակ գերմանական արդիւնագործութեան համար մի մեծ ու օգտակար վաճառանոց է, իբրեւ ամենամօտիկ հարեւան իր լայնարձակ հողերով, իսկ արդիւնագործութեամբ եւ բազմամիլիօն ազգաբնակչութեամբ:

Իբրեւ ապացոյց բաւական է վերցնել վերջին չորս տարիների ներմուծման ու արտահանութեան քուերը: Այսպէս՝

Ռուսաստանը արտահանել է	Գերմանիան արտահանել է
դէպի Գերմանիա.	դէպի Ռուսաստան.
1896 թ. 634,7 միլիօն մարկ.	364,1 միլիօն մարկ.
1897 » 700,1 » »	345,6 » »
1898 » 727,1 » »	409,6 » »
1899 » 767,1 » »	437,1 » »

Այդ քուերի նշանակութիւնն աւելի կը պարզուի, եթէ աչքի առաջ ունենանք, որ Գերմանիան արտահանում է մի այն գործարանական ապրանքներ, իսկ Ռուսաստանը բնդհակառակը—այսինքն հում նիւթեր, գիւղատնտեսական մրերներ: Եթէ Գերմանիան

բարձրացնե հում նիւթերի մաքար, այն ժամանակ Ռուսաստանն էլ նոյնը կ'անէ ինդուստրիայի արտադրանքի արժանանալու պարագային վերաբերմամբ (հարցի այդ կողմը լուրջ ուշադրութիւն գրաւեց մանաւանդ «Торгово-промышленная газета»-ի յօդուածից յետոյ) — եւ այդ բոլորի ընդհանուր հետեւանքը կը լինի այն, որ յիշեալ բուերը հետզհետէ կը նուազեն եւ գերմանական ինդուստրիան մի զգալի հարուած կը ստանայ, առաջացնելով յանախակի կրիզիսներ, նրպասելով օրավարձի անկմանը, եւ այլն:

Բայց գիւղատնտեսութիւնը կամ աւելի ճիշտն առած՝ ագրարները հասած կը լինեն իրանց նպասակին, այսինքն կը կարողանան աւելի իւղալի պատառ նաւակել, որովհետեւ արտադրանքներն մրցումից ազատուելով, կը վաճառեն իրանց արտադրած նիւթերն աւելի քանգ գնով, աւելի ձեռնու պայմաններով:

Իսկ ո՞վ պէտք է լինի նրանց պատառին իւղ փողը, ո՞վ պէտք է լինի նրանց ազահութեանը յագուրդ տուողը... Ի հարկէ ժողովուրդը, եւ անա՛րք ինչպէս.

Վիճակագրական տեղեկութիւններից երեւում է*), որ իւրաքանչիւր գերմանացի գործ է ածում տարեկան 200 կիլօ հաց, եւ երբ հացահատիկների մաքար բարձրանայ մինչեւ 5, այն ժամանակ տարեկան հացի գինը կը քանգանայ 10 մարկով, երբ մաքար բարձրանայ մինչեւ 6, այդ աւելորդ գում. կը հասնի 12-ի.

» » » » 7, » » » » 14-ի.

» » » » 8, » » » » 16-ի.

Եւ այլն. ուրեմն ճիշդ հոգուց բաղկացած ընտանիքը պիտի ունենայ տարեկան 60, 70, 80 մարկ աւելորդ ծախս, որպէս զի «գանի ու հայրենիքի պաշտպան» ագրարները յագնան ու գոն մնան:

Ի հարկէ հարուստ ընտանիքի համար այդ գումարը չնչին բան է. բայց ի՞նչ անէ թուառ բանուորը. նա ո՞րտեղից հայրաքայէ այդ աւելորդ գումարը, երբ նա գլխին կախուած է եւ մի ուրիշ Իւանօկեան սուր, այն է՝ ինդուստրիական կրիզիս, անգործութիւն, օրավարձի սակաւութիւն, եւ այլն:

Բարձր մաքար կողմնակիցներից շատերը խոստովանում են այդ ամենը, բայց միւս կողմից պնդում են, թէ առանց այդպիսի գոհաբերութեան գերմանական գիւղատնտեսութիւնը չէ կարող առաջադիմել, չէ կարող իր աննախանձելի վիճակից դուրս գալ: Բայց յայտնի տնտեսագէտ Բերնեսթընը ընդհակառակը **), օրինակ վերցնելով Անգլիայի անցեալ տնտեսական կեանքը, գիտնականօրէն հաստատում է, որ բարձր մաքար կը բարձրացնէ միայն հողավար-

*) Տե՛ս «Die Gleichheit», № 4, 1901.

**) Տե՛ս «Sozialistische Monats-Hefte» № 3, 1901.

ձր եւ երբեք չէ կարող բարձրացնել գիւղատնտեսութիւնը, չէ կարող զարգացնել նրա կուլտուրան...

Այսպէս ուրեմն, գերմանական արդիւնագործութիւնն ու ժողովուրդը բարձր մակսից միայն վնաս կարող են ստանալ եւ ոչ օգուտ:

Այժմ մի նոր հարց է առաջ գալիս. երբ իրողութիւնն այդ է, երբ փաստերն այդպէս պարզ ու անհերքելի են, հապա ինչո՞ւ են լռել ինդուստրիայի ներկայացուցիչները, եւ կառավարութիւնն ինչո՞ւ է օտար իր յօժարութիւնը հացահատիկների մասը բարձրացնելու վերաբերմամբ: Այդ հարցի համապատասխան լուծումը տալիս է «Die Neue Zeit.» շաբաթաթերթը (№ 16) իր առաջնորդող յօդուածով:

Այդտեղ յօդուածագիրը գեղեցիկ կերպով պակեցեցնում է այն միջնորդական դերը, որ խաղում է պէտական կանցիէր գրաՖիլովը, եւ անա՛ր քե ինչպէս. մի կողմը կանգնած են ինդուստրիայի ներկայացուցիչները՝ չարափասիկ «ջրանցֆային» նոր առաջարկով, իսկ միւս կողմը—ագրարները՝ բարձր մակսի պահանջով. ֆալանգէս գրաՖը մեկ ձեռքը մեկին տուած, իսկ միւս ձեռքը միւսին, ուզում է երկուսին էլ անվստահ անցկացնել ռէյխսագի ֆննութեան բովից: Այդ նպատակով նա մի կողմից շեղում է կապիտալիստների ականջին.

—Ձեր ցանկութիւնը կը կատարուի, միայն համաձայնեցե՛ք մասը բարձրացնել. իսկ միւս կողմից ագրարներին է հասկացնում.

—Ձեր պահանջը կը կատարուի, միայն ռէյխսագում «Ձրանցֆային առաջարկը» պատշտայնեցե՛ք:

Անա՛ր այդպիսի նանապարհ են ընտել տրող դասակարգերը, այդպիսի փոխադարձ զիջումներով են առաջ մղում իրանց շահերը:

Հապա ի՞նչ անէ խեղճ ժողովուրդը, ո՞ւմ ձեռքը բռնէ աշխատուոր դասակարգը, որին միշտ շահագործում են, որի օրական չոր հացն էլ քանգացնել են աշխատում...

Նա կարող է միայն բողոքել անարդարութեան դէմ եւ այդ բանն անում է ամենալայն չափով: Գերմանիայի մի ծայրից մինչեւ միւսը՝ քե՛ր առանձին ժողովներում եւ քե՛ մամուլի էջերում անընդհատ հնչում է այդ արդար բողոքի ձայնը, որ ըստ երեւոյթին դեռ աւելի զօրեղանալու է Ձախից յետոյ, այսինքն երբ մասսային հարցը ռէյխսագի ֆննութեան նիւրը կը դառնայ:

Պրօֆէսօր Զոմբարսը ներկայ տնտեսական կեանքի եւ անհատական ազատութեան մասին:

Bo W S 20

Բրեւալաի յայտնի պրօֆ. Զոմբարսն ամսիս 18-ին բազմաթիւ ունկընդիրների ներկայութեամբ կարդաց (Բերլինում) մի հետաքրքիր դասախօսութիւն, որի նպատակն էր մասնանիւ աճել այն հսկասութիւնը, որ գոյութիւն ունի անհասկանալի ազատութեան եւ ներկայ տնտեսական կեանքի մէջ, եւ այն ճանապարհը, որով կարելի է օր առաջ վերացնել այդ վնասաբեր իրողութիւնը: Ահա՛ այդ ուշագրաւ դասախօսութեան հակիրճ բովանդակութիւնը.

—Ամբողջ դարերի ընթացքում մարդկութիւնը ձգտել է դէպի ազատութիւն: Նա անթիւ ու անհամար զոհեր է տուել այդ նպատակին հասնելու համար, շատ ու շատ անգամ արեան գետեր է հոսեցրել, «ելբայրութիւն, հաւասարութիւն եւ ազատութիւն» բացականչելով:

Բայց ի՞նչ... Այժմ նա անելի փչ անհասական ազատութիւն է վայելում, քան երբ եւ իցէ, անելի փչ ինքնուրոյնութիւն ունի, քան թէ հին ժամանակներում:

Հնադարեան ընտանիքն ինքն աշխատում, ինքն վայելում էր իր փրփրի արդիւնքը. միջնադարեան արհեստաւորն ազատ աշխատում էր իր սեփական գործիքներով եւ ընդհանում այդ աշխատանքը իր կամքի համեմատ. նա ուներ իր անհասական կամքը, իր ազատութիւնը...

Իսկ այժմ... Հանգամանքները փոխուել են, կեանքը բարդացել է եւ անհասական ազատութիւնը գերօրհ հաւասարուել: Եւ իսկապէս, ֆաղափարքութիւնը հսկայական փայլեր է անում. շուրջին ու երեսնականութիւնը կատարեալ յեղափոխութիւն առաջ բերին տնտեսական կեանքում. մի յեղափոխութիւն, որի յաղթական ընթացքը դեռ շարունակուում է: Հօր կայիսալիզմն իր ազդեցութիւնը տարածել է աշխարհի բոլոր կողմերը. եւ մենք, այդ ամենը տեսնելով, բացականչում ենք.

—Կեցցե՛ք ֆաղափարքութիւնը, կեցցե՛ք գիտութիւնն ու առաջադիմութիւնը:

Այո՛, կեցցե՛ն այդ բոլորը, բայց ի՞նչ գնով, ի՞նչպիսի գոհաբերութեամբ... Ո՛ւր է այն անհասական ազատութիւնը, որի համար մեր նախահայրերն արիւն էին քափում. նա չը կայ... Ներկայ տնտեսական կեանքն առաջ է շարժում բնական-մարդկային կամքից անկախ օրէնքներով եւ իր անիրենի տակ տնտեսում է անհատի ինքնուրոյնութիւնը: Ապացոյց—աւօրեայ կեանքը:

Ահա լուսանում է. աշխատաւորն արթնանում է լինից, բայց նա չէ կարող իր կամքի, հանդիքի եւ տնտեսական համեմատ վարուել. նրա ակննջին հնչում է մօտակայ գործարանի շուրջը, որ կանչում է նրան դէպի գործ, դէպի աշխատութիւն—փակուած գործարանում, անշունչ մեքենաների թելադրութեամբ: Նա պիտի

մնայ այդտեղ, պիտի աշխատի, մինչեւ որ նորից լսուի փրկարար շրուոյր: Դրանից յետոյ նա ազատ է, բայց անընդունակ մի ուրիշ բան կատարելու, իր հոգեկան ու մտաւոր պահանջներին յագուրդ տալու: Նա պիտի հանգստանայ, որպէս զի հետեւեալ օրը նորից նոյն մեքենայական աշխատանքը շարունակէ:

Սակայն միայն բանուորը չէ, որ տնտեսական կեանքի մեքենան է դարձել. կապիտալիստներն ու միւս անհասներն էլ նոյն դրութեան մեջ են, նոյնպէս զուրկ են ազատութիւնից: Դրանք էլ անընդհատ պիտի հետեւեն վաճառանոցի ու բօսայի ելեւեջներին, իրանց կապիտալի գործունեութեանը եւ այլն:

Ահա՛ այդպիսով այն մարդկութիւնը, որ ամբողջ պատմութեան ընթացքում «ազատութիւն, ազատութիւն» էր կանչում, այժմ տնտեսական կեանքի ստրուկն է դարձել:

Սակայն ի՞նչպէս դուրս գալ այդ դրութիւնից ի՞նչպէս լուծել այդ Գորդեան հանգոյցը: Դրա համար մենք պէտք է աշխատենք երբեք ոչ բոլորովին, զերբ մասամբ ազատուել տնտեսական կեանքի իշխանութիւնից, զերբ մասամբ ինքնուրոյն ու ազատ լինել: Իսկ այդ նպատակին հասնել կարող ենք, երբ տնտեսական բարեւիտներն եւ մարդկային արտադրող ոյժը բանգ զնահասենք, այսինքն բանուորական օրավարձը բարձրացնենք: Այդ դեպքում մարդը կը կարողանայ քիչ աշխատել, շատ բան արտադրել, շատ բան տանալ ու իր նիւթական պահանջներին յագուրդ տալ: Իսկ մնացած ազատ ժամանակը նա կարող է եւ հանգստանալ եւ իր մտաւոր ու հոգեկան կարիքները հոգալ կամ ուրիշ խօսքով ասած՝ անհատական ազատութիւն վայելել: Միայն այդ դեպքում մարդկութիւնը կարող է բացականչել.

—Կեցցե՛ք՝ քաղաքակրթութիւնը, որ մարդուն արժանաւայել ազատութիւն է տալիս:

Ե. ԹՈՓՉԵԱՆ